ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 1297-Ա « 10 » ապրիլի 2025թ.

ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ՆՈՐ-ԱՐԵՇ 11-ՐԴ ՓՈՂՈՑ Հ.19 ՀԱՍՑԵԻ
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՉԱԳԱՆ ՀՐԱՉԻ ԲԱԴԱԼՅԱՆԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել Վաչագան Հրաչի Բադալյանի (ծնված 29.11.1990թ.) դիմումը (22.05.2023թ. հ.Դ-59907-23)։ Երևան, Էրեբունի վարչական շրջան, Նոր-Արեշ 11-րդ փողոց հ.19 հասցեում՝ ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 362.39քմ, որից 221.91քմ մակերեսով հողամասը Վաչագան Հրաչի Բադալյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական հ.22122022-01-0016 տրված 22.12.2022թ.)։

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 11.08.2023թ. հ.ԱՏ-11082023-01-0579, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 05.10.2023թ. հ.Հ-13017 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 09.10.2024թ. հ.20-Ել-5823-24 եզրակացությունը, համաձայն որի Երևան, Էրեբունի վարչական շրջան, Նոր-Արեշ 11-րդ փողոց հ.19 տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով.

1. Վերականգնել Երևան, Էրեբունի վարչական շրջան, Նոր-Արեշ 11-րդ փողոց հ.19 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Վաչագան Հրաչի Բադալյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 221.91քմ մակերեսով հողամասին կից 140.48քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 140.48քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3. Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը, Երևան, Էրեբունի վարչական շրջան, Նոր-Արեշ 11-րդ փողոց հ.19 հասցեում գտնվող 362.39քմ հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

6.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ